


տուած ոգիներն են այդ աղբարարողը, և կամ երազ ցնորք-
ները չէ՞ն, կամ անմարմին տեսիլները՝ ուրուականները: Եւ
ի՛նչ է յայտարարում այդ ձայնը. արդեօք աշխարհի վերածնու-
թի՛ւնը, թէ՞ կործանումը:

Եւ արագասլաց Քամին սաւառնում էր ու սաւառնում
անյայտ, անանուն, անտառային հոկայ գերեզմանից աւելի
հեռու, և ամենուրեք, — թէ՛ տարածութեան, թէ՛ հեռաւորու-
թեան, թէ՛ ժամանակին, թէ՛ յիշողութեան, և թէ՛ սրտերին,
իւր հետ տանում է հեռաւոր ապագայի յաղթանակով հնչող
հզօր կոչը.

— Gloria victis.

Ն. Քիւրդեանց.



* * *

Սիրտս թռաւ երկինքն ի վեր
Ինչպէս մրրիկ ու կայծակ.
Հոգիս առաւ արծուի թևեր,
Վեր սլացաւ համարձակ.

Անհունի մէջ՝ լազուր ծովում,
Որ ծայր չունի ու սահման,
Սիրտս ազատ, անվախ լողում,
Ափ է վազում անսասան:

Եւ իմ հոգին նրան ընկեր
Ճիգ է թափում քաջի պէս,
Սուրում, թռչում և անվեհեր
Ճեղքում ալիք փրփրադէզ...

Յարութիւն Պետրոսեան

1908 թ. 18 Ապրիլի

